«Բյուջեներ քաղաքացիների համար» ծրագիր

ՔՀԿ-ների, երիտասարդ մասնագետների և քաղաքացիների կարողությունների զարգացման պլան և նրանց կարողությունների փոփոխությունը գնահատելու և հետևելու գործիք

ԵՐԵՎԱՆ, 2023

ՔՀԿ-ների, երիտասարդ մասնագետների և քաղաքացիների կարողությունների զարգացման պլանը և նրանց կարողությունների փոփոխությունը գնահատելու և հետևելու գործիքը մշակվել է «Բյուջեներ քաղաքացիների համար» ծրագրի շրջանակներում, որը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից: Փաստաթղթի բովանդակության համար պատասխանատու է ծրագիրը և այն որևէ կերպ չի արտահայտում Եվրոպական միության պաշտոնական տեսակետը:

«Բյուջեներ քաղաքացիների համար» ծրագիրն իրականացվում է «Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ-ի կողմից՝ գործընկերներ՝ «Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոն» ՀԿ-ի և «Ագորա Սենթրլ Յուրոպ» ՀԿ-ի (Չեխիա) հետ համագործակցությամբ: Ծրագրի նպատակն է քաղաքացիական հասարակության մասնակցությամբ խթանել Հայաստանում ներառական և թափանցիկ բյուջետային գործընթացին և նպաստել պետական բյուջետային գործընթացներին քաղաքացիական հասարակության մասնակցության ուժեղացմանը:

Փաստաթղթից օգտվելիս պատշաճ հղումը պարտադիր է:

© «ԲՅՈՒՋԵՆԵՐ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ» ԾՐԱԳԻՐ, 2023

Բովանդակություն

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ 1 4
ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ 2 5
ՆԱԽԱԲԱՆ 6
1. Ելակետային գնահատման հետազոտության զեկույցի ամփոփ արդյունքները 7
1.1. Ելակետային գնահատման հակիրճ արդյունքները 8
1.2. Ելակետային գնահատման ամփոփումը 9
2. ՔՀԿ-ների, երիտասարդ մասնագետների և քաղաքացիների կարողությունների զարգացման պլանի մեթոդոլոգիա 13
2.1. Զարգացման պլանի «Պետական բյուջե, բյուջեների վերլուծություն և մոնիտորինգ» և «Բյուջետային գործընթացի ՇՊ իրականացում» մոդուլների բաժինների մեթոդոլոգիա 13
2.2. Զարգացման պլանի «Հարակից կարիքահեն կարողություններ» մոդուլի բաժնի մեթոդոլոգիա 17
3. ՔՀԿ-ների, երիտասարդ մասնագետների և քաղաքացիների կարողությունների զարգացման պլան 20
3.1. Թիրախային խումբ 1. ՔՀԿ-ներ, ներառյալ՝ ԶԼՄ-ներ 20
3.2. Թիրախային խումբ 2. Երիտասարդ մասնագետներ 25
3.3. Թիրախային խումբ 3. Քաղաքացիներ 31
4. ՔՀԿ-ների, երիտասարդ մասնագետների և քաղաքացիների կարողությունների զարգացման գնահատման գործիքի մեթոդոլոգիա 33
4.1. ՔՀԿ-ների և ԶԼՄ-ների կարողությունների փոփոխությունը գնահատելու և հետևելու գործիքը (Գնահատման գործիքը) 33
4.2. Երիտասարդ մասնագետների կարողությունների փոփոխությունը գնահատելու և հետևելու գործիքը (Գնահատման գործիքը) 35
4.3. Քաղաքացիների կարողությունների փոփոխությունը գնահատելու և հետևելու գործիքը (Գնահատման գործիքը) 36

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ 1

ԲՈՒՀ	Բարձրագույն ուսումնական հաստատություն
ԵՄ	Եվրոպական միություն
ԶԼՄ	Զանգվածային լրատվության միջոց
ԻՀԱ	Իրավաբանների հայկական ասոցիացիա
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՇՊ	Շահերի պաշտպանություն
ՏԶՀԿ	Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոն
ՏԻՄ	Տեղական ինքնակառավարման մարմին
ՔՀԿ	Քաղաքացիական հասարակության կազմակերպություն

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ 2

Բյուջետային գիտելիքի փոխանակման և ուսուցման հարթակ	Բյուջետային Հարթակ
Բյուջետային փորձագետների խումբ	Փորձագետների խումբ
Բյուջեներ քաղաքացիների համար» ծրագիր	Ծրագիր
Ելակետային գնահատման հետազոտության զեկույց	Ելակետային գնահատում
Երիտասարդ մասնագետների դպրոց	Դպրոց
Երիտասարդ մասնագետների ռեեստր	Ռեեստր
ՔՀԿ-ների կարողությունների զարգացման պլանի շահերի պաշտպանության իրականացման բաժին	Զարգացման պլանի ՇՊ բաժին
ՔՀԿ-ների, երիտասարդ մասնագետների և քաղաքացիների կարողությունների փոփոխության գնահատման գործիք	Գնահատման գործիք

ՆԱԽԱԲԱՆ

«Բյուջեներ քաղաքացիների համար» ծրագրի շրջանակներում առանձնահատուկ տեղ է հատկացված քաղաքացիական հասարակության կազմակերպությունների (ՔՀԿ-ներ) և երիտասարդ մասնագետների բյուջետային վերլուծությունների, բյուջետային ոլորտի հանրային քաղաքականությունների վերաբերյալ շահերի պաշտպանության իրականացման և ՔՀԿ-ների կարիքահեն հարակից կարողությունների զարգացմանը: Ծրագրի շրջանակներում գործընկերները կարևորում են նաև քաղաքացիների համար պարզեցված բյուջետային տեղեկատվության գործիքներին ծանոթացումը, ինչպես նաև բյուջետային գրագիտության բարելավումը, մասնավորապես՝ հանրային բյուջեների կառուցման տրամաբանությունը ընկալելու, բյուջետային պարզեցված տեղեկատվության շրջանակը և աղբյուրները ճանաչելու և կարդալու կարողությունների բարելավումը:

Ի թիվս այլնի, Ծրագրով նշված արդյունքների նվաճման գործիքներից է՝ **ՔՀԿ-ների կարողությունների զարգացման պլանը և ՔՀԿ-ների կարողությունների զարգացումը ստուգող գործիքը:** ՔՀԿ-ների կարողությունների զարգացման պլանը և դրա մեթոդոլոգիան մշակվել են հիմնվելով Ծրագրի շրջանակներում 2023 թվականի մարտ-մայիս ժամանակահատվածում իրականացրած Ելակետային գնահատման հետազոտության արդյունքներով վեր հանած խնդիրների ու դրանց հիման վրա հատկորոշած զարգացման ուղղությունների վրա: Ըստ այդմ՝ **ՔՀԿ-ների կարողությունների զարգացման պլանը** բաղկացած է 3 հիմնական փոխկապակցված բաժիններից.

1. Պետական բյուջե, բյուջեների վերլուծություն և մոնիտորինգ:
2. Բյուջետային գործընթացի շահերի պաշտպանության (ՇՊ) գործիքները:
3. Բյուջետային գործընթացի ՇՊ-ի իրականացման նպատակով ՔՀԿ-ների կարիքահեն հարակից հմտությունները:

Զարգացման պլանը ներառել է **հետևյալ շահառուներին (թիրախային խմբերին)**.

1. ՔՀԿ-ներ, ներառյալ՝ զանգվածային լրատվական միջոցներ (ԶԼՄ),
2. երիտասարդ մասնագետներ,
3. քաղաքացիներ[1]:

Ըստ մեթոդոլոգիայի՝ Զարգացման պլանը իրականացվելու է մի քանի **մեթոդների և գործիքների** համադրման արդյունքում, որոնք ներկայացված են սույն փաստաթղթի համապատասխան բաժնում:

ՔՀԿ-ների կարողությունների զարգացումը ստուգող գործիքը մշակվել է հիմնվելով ՔՀԿ-ների կարողությունների զարգացման պլանի և դրա մեթոդոլոգիայի վրա: Այս գործիքը օգնելու է գնահատել Զարգացման պլանի վերը նշված երեք բաժիններով շահառուների կարողությունների զարգացման և հմտությունների փոփոխման ընթացքը և ստացված վերջնարդյունքը, որը հնարավորություն կտա գնահատել՝ թե որքանո՞վ են իրականում Ծրագրի շրջանակներում իրականացված կրթական բաղադրիչները նպաստել ՔՀԿ-ների, երիտասարդ մասնագետների և քաղաքացիների կարողությունների և հմտությունների զարգացմանը:

---

[1] Քաղաքացիների ուսուցման թեմաներում ընդգրկված չեն «Բյուջետային գործընթացի ՇՊ-ի իրականացման նպատակով ՔՀԿ-ների կարիքահեն հարակից հմտությունները» բաժնի թեմաները:

1. Ելակետային գնահատման հետազոտության զեկույցի ամփոփ արդյունքները

ՔՀԿ-ների ելակետային գնահատման հետազոտության զեկույցը (Ելակետային գնահատում) ելակետային ուսումնասիրության արդյունք է, որը պատվիրակել է «Բյուջեներ քաղաքացիների համար» ծրագիրը՝ ՔՀԿ-ների կողմից բյուջետային տեղեկատվության իրազեկվածության, կարիքների և օգտագործման վերաբերյալ տվյալներ հավաքագրելու և վերլուծելու նպատակով: Հետազոտության արդյունքները հենք են հանդիսացել Ծրագրի հետագա ընթացքը թիրախային և կարիքահեն իրականացնելու համար:

Ելակետային գնահատման շրջանակներում՝

1. Ուսումնասիրվել և գնահատվել է ՔՀԿ-ների բյուջեների մշտադիտարկման և վերլուծության, այդ թվում պարզեցված բյուջեների կազմման տեղեկացվածությունը, կարիքները և կարողությունները:
2. Ուսումնասիրվել և գնահատվել է ՔՀԿ-ների մասնակցային բյուջետավորման և շահերի պաշտպանության իրականացման տեղեկացվածությունը, կարիքները և կարողությունները:
3. Ուսումնասիրվել և գնահատվել է ՔՀԿ-ների հարակից այլ կարիքները, կարողությունները, բացերն ու խնդիրները:
4. Տրամադրվել է պատկերացում ՔՀԿ-ների իրազեկության, կարիքների և կարողությունների վերաբերյալ՝ ծրագրին տեղեկացնելու առկա բացերի և խնդիրների մասին, որոնց վրա պետք է կենտրոնանալ ծրագրի շրջանակներում ՔՀԿ-ների կարողությունների զարգացմանն ուղղված միջամտություններ մշակելիս:
5. Տրամադրվել են ելակետային տվյալներ ՔՀԿ-ների իրազեկության, կարիքների և կարողությունների վերաբերյալ, որոնք կարող են օգտագործվել ծրագրի արդյունավետությունը չափելու համար[2]:

Ուսումնասիրության մեթոդոլոգիան ներառել է հատուկ մշակված առցանց հարցաշար, որը լրացվել է 81 ՔՀԿ-ների կողմից, հարցազրույցներ շահագրգիռ կողմերի հետ, ֆոկուս խմբային քննարկումներ, ինչպես նաև մասնակցություն ՀՀ նախարարությունների բյուջետային հայտերի հանրային քննարկումներին: Հարցաշարում ներառվել են հարցեր բյուջետային գործընթացին ՔՀԿ-ների մասնակցության, իրազեկվածության և բյուջետային հմտությունների ու կարողությունների (մասնավորապես՝ բյուջետային տեղեկատվության վերլուծման, մոնիտորինգի և գնահատման), բյուջետային գործընթացի ՇՊ-ի իրականացման, ՇՊ գործիքների և դրանց կիրառման վերաբերյալ առկա բացերն ու կարիքները վերհանելու նպատակով: Հարցաշարի մյուս խումբ հարցերը վերաբերել են բյուջետային գործընթացի ՇՊ-ի իրականացման նպատակով ՔՀԿ-ների կարիքահեն հարակից հմտությունների անհրաժեշտությանը և դրանց շրջանակին:

[2] Նախատեսվում է նմանատիպ գնահատում անցկացնել նաև Ծրագրի իրականացման ավարտին:

1.1.Ելակետային գնահատման հակիրճ արդյունքները

- **Բյուջետային տեղեկատվության իրազեկվածության և օգտագործման մակարդակը ցածր է:** ՔՀԿ-ների 13.8%-ը ընդհանրապես չեն օգտվել պետական բյուջեի տեղեկատվությունից, իսկ ՔՀԿ-ների 43.8%-ը օգտվել են տարին միայն մեկ կամ երկու անգամ: Տեղեկատվություն ստանալու առավել շատ օգտագործվող աղբյուրները նախարարությունների և տեղական ինքնակառավարման մարմինների (ՏԻՄ) կայքերն են: Պետական բյուջեի վիճակագրության օգտագործման մակարդակը ցածր է:
- **Բյուջետային գործընթացին մասնակցության մակարդակը ցածր է:** ՔՀԿ-ների 32.5%-ը նշել է, որ մասնակցել է բյուջեի քննարկումներին, դա մեծամասամբ եղել է մինչև 2022 թվականը, և շատ դեպքերում եղել է ոչ թե պետական մարմինների, այլ՝ համայնքային մակարդակում: 2022 թվականին ՔՀԿ-ների միայն 6%-ն է մասնակցել որևէ մակարդակում քննարկումներին:
- **ՔՀԿ-ների կողմից բյուջեի վերահսկման, մոնիտորինգի դեպքերը** ևս շատ քիչ են. ՔՀԿ-ների միայն 20%-ն է վերջին տարիների ընթացքում իրականացրել բյուջեի կատարողականի մոնիտորինգ: Ընդ որում, մշտադիտարկումները ևս մեծամասամբ իրականացվել են համայնքային բյուջետային ծրագրերի մակարդակում:
- **ՔՀԿ-ների ճնշող մասը չի մշակել պարզեցված (քաղաքացիների) բյուջեներ:** Ավելի քան 90%-ը երբեք չի մշակել **պարզեցված (քաղաքացիների) բյուջեներ**, և միայն մեկ ՔՀԿ է մշակել այդպիսի բյուջեներ 2022 թվականին:

ՔՀԿ-ների ինքնագնահատման համաձայն՝

- **Մասնակցության ցածր մակարդակը** հիմնականում պայմանավորված է՝
    - մասնակցության հնարավորությունների վերաբերյալ իրազեկվածության ցածր մակարդակով (70%),
    - անհրաժեշտ բյուջետային տեղեկատվության վերլուծման կարողությունների բացակայությամբ (70%),
    - բյուջետային գործընթացում մասնակցության հնարավորության կարճ ժամկետներով (43.8%):

- Պետական բյուջեի վերաբերյալ **ՇՊ-ի իրականացման ցածր մակարդակը** հիմնականում պայմանավորված է՝
    - ռեսուրսների բացակայությամբ պատճառով (68.8%),
    - ՇՊ-ի գործիքների մասին անտեղյակությամբ (51.3%),
    - իրավասու մարմինների կողմից համագործակցության ցանկության բացակայությամբ (38.8%):

Թեև հարցմանը մասնակցած ՔՀԿ-ների 37.5%-ը նշել է, որ իրականացրել է ՇՊ, իրականում արձանագրվել է, որ այդ թիվը **ավելի քիչ է**, և **միայն 10%-ն է** վերջին տարիներին զբաղվել ՇՊ գործունեությամբ:

ՔՀԿ-ները հատկապես կարևորել են հետևյալ հմտությունների բարելավման կարիքը.

- **Զարգացման կարիք ունեցող հիմնական հմտությունների շրջանակը՝ Բյուջեի վերլուծություն՝** 83.8%, **բյուջեի տեղեկատվության հասանելիություն և օգտագործում՝** 82.5%, **մոնիտորինգի իրականացում՝** 73.8%, **ՇՊ-ի իրականացում՝** 71.3%:
- **ՇՊ իրականացնելու հմտությունները բարելավելու** տեսանկյունից ՔՀԿ-ների կողմից առանձնացրած հիմնական խնդիրը՝ ազգային և միջազգային ՇՊ-ի փորձի մասին տեղեկատվության պակասն էր:
- **Զարգացման կարիք ունեցող հարակից հմտությունների շրջանակը** ներառել է՝ ֆինանսական կայունության ապահովումը, Ռազմավարական պլանավորման և շահագրգիռ կողմերի հետ հարաբերություններ ստեղծելու հմտությունները, ՔՀԿ-ների ցանցերում և կոալիցիաներում մասնակցությունը:

ՔՀԿ-ների մեծ մասը երբեք չի մասնակցել բյուջեի հետ կապված դասընթացներին: Նրանց մասնակցած դասընթացները կազմակերպվել են մինչև 2021 թվականը, իսկ վերջին 2 տարվա ընթացքում վերապատրաստումներ հիմնականում կազմակերպել է ՏՁՀԿ-ը:

Բացահայտումները նաև տրամադրեցին ելակետային տվյալներ 2022 թվականին ՔՀԿ-ների ներգրավվածության վերաբերյալ, և ցույց տվեցին, որ միայն մի քանի ՔՀԿ-ներ ունեն և՛ հմտություններ, և՛ կարողություններ այս ոլորտում, մինչդեռ **իրազեկվածության** ընդհանուր **մակարդակը** նույնպես **ցածր է**:

Եզրակացությունները և առաջարկությունները կենտրոնանում են ՔՀԿ-ների բյուջետային գրագիտության, իրազեկման և մասնակցության, ՇՊ-ի, հարակից կարողությունների զարգացման կարիքների և ծրագրի վեբկայքի/պլատֆորմի, ինչպես նաև այլ հարցերի շուրջ:

1.2. Ելակետային գնահատման ամփոփումը

Ընդհանուր առմամբ, ՔՀԿ-ների կողմից Ելակետային գնահատման շրջանակներում խնդիրները վեր են հանվել հետևյալ երեք ուղղություններում.

1. **Պետական բյուջե, բյուջեների վերլուծություն և մոնիտորինգ, բյուջետային գործընթացների տեղեկացվածություն:**
2. **Բյուջետային գործընթացի ՇՊ-ի հմտություններ և գործիքների վերաբերյալ տեղեկացվածություն, այդ թվում՝ ազգային և միջազգային փորձի տեսանկյունից:**
3. **Բյուջետային գործընթացի ՇՊ-ի իրականացման նպատակով ՔՀԿ-ների հարակից հմտությունների շրջանակ, որոնք ունեն զարգացման կարիք:**

Ըստ այդմ, Ելակետային գնահատմամբ արդյունքները ներկայացվել են երեք հատկորոշված ուղղություններով և համապատասխան առաջարկությունները մշակվել են դրանց լույսի ներքո: Սույն փաստաթղթում առաջարկությունները խմբավորվել և ներկայացվել են ըստ հետևյալ ուղղությունների և շահառուների (թիրախային խմբերի).

Ուղղությունը	Առաջարկությունների բովանդակությունը և այն ստացած թիրախային խմբերի շրջանակը
ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԳՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ	*Ծրագրին՝* - Բյուջեի պարբերաշրջանի և բյուջետային գործընթացների վերաբերյալ գիտելիքների զարգացում: - ՔՀԿ-ների ազդեցության հնարավորությունների և գործիքների ծանոթացում: - Քաղաքականության մշակման վաղ փուլերում ռազմավարական պլանավորման մասնակցություն և սահմանված առաջնահերթությունների իրականացման քաղաքացիական վերահսկման գործիքների ուսուցում: - Բյուջետային տվյալների աղբյուրներից և վիճակագրությունից օգտվելու հմտություններ: - Բյուջետային տեղեկատվության տեսակների և բյուջետային վերլուծության գործիքների տիրապետում: - Բյուջետային ծրագրերի մոնիտորինգի և գնահատման հմտությունների զարգացում:
ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԻՐԱԶԵԿՎԱԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ***Ենթառուղղություններ***. - ՔՀԿ-ների մասնակցությունը բյուջետային հայտերի հանրային քննարկումներին: - ՔՀԿ-ների իրազեկվածություն և մասնակցություն պարզեցված (քաղաքացու) բյուջեներին:	*Ծրագրին՝* - Պարզեցված (քաղաքացու) բյուջեների վերաբերյալ տեղեկացվածության բարձրացման և այն կազմելու նպատակով հմտությունների զարգացում: *Կառավարությանը և պետական մարմիններին՝* - Մոնիտորինգ իրականացնելու համար ՔՀԿ-ներին ֆինանսավորման տրամադրում: - Քննարկումների ուղղորդում՝ այն առավել թիրախային դարձնելու մասով: - Հասարակական խորհուրդներում բյուջետային հայտերի քննարկումների կազմակերպում: - Ազգային ժողովի կողմից ՔՀԿ-ների հետ համագործակցության խթանում: *Քաղաքացիական հասարակությանը և ծրագրին՝* - ՔՀԿ-ների կողմից բյուջետային գործընթացը՝ ռազմավարական պլանավորման և զարգացման, ինչպես նաև մշտադիտարկման ուղղության դիտարկում:

ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ	*Ծրագրին՝* - ՇՊ իրականացնելու համար ուղղված կարողությունների զարգացում, - ՇՊ իրականացնելու համար այլ հմտությունների զարգացում, այդ թվում՝ մասնակցություն և ազդեցություն պետական մարմինների և ՏԻՄ-ների կողմից որոշումների կայացման գործընթացում; ազգային և միջազգային թիրախային փորձի ներկայացում; պետական մարմինների և ՏԻՄ-ների հետ կառուցողական երկխոսության կարողությունների զարգացում։ - Ցանցերի և կոալիցիաների հիմնադրմանը, և համանման այլ նախաձեռնությունների ստեղծմանը խրախուսում և աջակցում։ *Քաղաքացիական հասարակությանը՝* - Բյուջեների վերլուծության իրականացում՝ ըստ թիրախային ոլորտների, ուղղությունների՝ պատասխանատու սուբյեկտների հետ կառուցողական համագործակցության եղանակով։ *Ծրագրին՝* - Վերը նշված հարցերի և ուղղությունների վերաբերյալ ՔՀԿ-ների համար վերապատրաստումների կազմակերպում, ուսումնական նյութերի մշակում և կարողությունների զարգացում։
ՔՀԿ-ՆԵՐԻ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԸ	*Ծրագրին՝* Իրականացնել **ՔՀԿ-ների կարիքահեն կարողությունների զարգացման ուժեղացում**, որը կներառի՝ - բյուջեի վերլուծության կատարում, - ռազմավարական պլանավորում, նախատեսելով բյուջետային գործընթացին մասնակցությունը որպես առանձին նպատակ, - տվյալների աղբյուրների փնտրում և վերլուծություն, - փաստահեն քաղաքականության մշակում, - ՔՀԿ-պետություն/ՏԻՄ երկխոսության հմտություններ, - մշտադիտարկման հմտություններ,

	- ՇՊ-ի իրականացման հմտություններ, ներառյալ՝ շահագրգիռ կողմերի սահմանում, արշավների նախագծում և պլանավորում, արդյունավետ հաղորդակցության պլանի իրականացում, - ՔՀԿ-ների հարակից կարիքահեն կարողությունների զարգացում, ներառյալ՝ ○ ֆինանսական կայունության հմտությունների բարելավում, ինչպիսիք են՝ ֆինանսական աղբյուրների հայթայթումը և դիվերսիֆիկացումը, ○ ՔՀԿ-ի զարգացման (նաև՝ ինքնագնահատման) և ռազմավարական պլանավորման հմտությունների ուժեղացում, ներառելով՝ մարդկային ռեսուրսները, ծրագրեր և ծառայությունները, արտաքին հարաբերությունները, ○ շահագրգիռ կողմերի հետ հաղորդակցվելու (շահառուների, պետության և ՏԻՄ-ի գործընկերների, ինչպես նաև ավելի լայն հանրության հետ) հմտություններ, ○ կոալիցիաներ և ցանցեր հիմնադրելու և գործարկելու հմտություններ, գենդերային հավասարությունն ապահովումը:
ԾՐԱԳՐԻ ԿԱՅՔԸ/ՊԼԱՏՖՈՐՄԸ	*Ծրագրին՝* - Հաշվի առնել Ելակետային գնահատմամբ նշված բոլոր թեմաներն ու առաջարկությունները և դրանք հնարավորինս ներառել հարթակի տեխնիկական և բովանդակային կառուցվածքում:
ԱՅԼ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	*Ծրագրին՝* - Ելակետային գնահատմամբ ներկայացրած միջազգային փորձի որոշ հատվածներ թարգմանել հայերեն և տրամադրել ՔՀԿ-ներին՝ գիտելիքների հարստացման նպատակով: - Ծրագրի կայքում/պլատֆորմում ՏԻՄ-երի կարողությունների զարգացման նպատակով դիտարկել անհրաժեշտ նյութերի տեղադրման հարցը՝ ՏԻՄ անդամներին բյուջետային գործընթացի վերաբերյալ իրենց պատկերացումները բարելավելու նպատակով:

2. ՔՀԿ-ների, երիտասարդ մասնագետների և քաղաքացիների կարողությունների զարգացման պլանի մեթոդոլոգիա

2.1. Զարգացման պլանի «Պետական բյուջե, բյուջեների վերլուծություն և մոնիտորինգ» և «Բյուջետային գործընթացի ՇՊ իրականացում» մոդուլների բաժինների մեթոդոլոգիա

Ի սկզբանե Ծրագրով նախատեսված էր ՔՀԿ-ների կարողությունների զարգացման պլանի «Պետական բյուջե, բյուջեի վերլուծություն և մոնիտորինգ» և «Բյուջետային գործընթացի ՇՊ-ի իրականացում» բաժիններում որպես թիրախային խումբ ընդգրկել միայն ՔՀԿ-ներին և երիտասարդ մասնագետներին: Երիտասարդ մասնագետները Ծրագրի հետագա փուլերում ներդրվելու են (ընդունվելու են աշխատանքի) ՔՀԿ-ներում՝ բյուջետային գործընթացում ՔՀԿ-ների գործուն և արդյունավետ մասնակցությունը ուժեղացնելու նպատակով: Այդուհանդերձ, Ծրագրի նախապատրաստական փուլի շրջանակներում ԵՄ-ի և ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացուցիչների հետ ունեցած քննարկումների արդյունքում, նպատակահարմար դիտարկվեց Զարգացման պլանի նշված երկու բաժինների շահառուների շրջանակում ներառել նաև քաղաքացիներին: Ըստ այդմ, սույն մեթոդոլոգիան ներկայացնում է ՔՀԿ-ների կարողությունների զարգացման պլանի «Պետական բյուջե, բյուջեի վերլուծություն և մոնիտորինգ» և «Բյուջետային գործընթացի ՇՊ-ի իրականացում» ուղղություններով կարողությունների զարգացման պլանը, մասնավորապես՝ հիմնական գործիքակազմը և մեթոդները՝ **ըստ շահառուների առանձին խմբերի.**

1. ՔՀԿ-ներ, ներառյալ՝ զանգվածային լրատվական միջոցներ (ԶԼՄ[3]),
2. երիտասարդ մասնագետներ,
3. քաղաքացիներ:

Ընդհանուր առմամբ, շահառուների կարողությունների զարգացման պլանը ենթադրում է հետևյալ մեթոդների և գործիքների համադրումը.

1) ՔՀԿ-ների և երիտասարդների կարողությունների զարգացման նպատակով դպրոցի ստեղծում,
2) Ուսուցման ծրագրերի մշակում,
3) Փորձագիտական խմբի ձևավորում,
4) Շահառու ՔՀԿ-ների և երիտասարդ մասնագետների ընտրություն և ուսումնառության գործընթացների կազմակերպում,
5) Կարողությունների զարգացման (փոփոխություններին հետևելու) գնահատման գործիքի մշակում և ձևավորված կարողությունների գնահատում:

[3] Սույն փաստաթղթի այն հատվածներում, որտեղ նշվում է ՔՀԿ-ների կարողությունների զարգացման և ուսուցումների մասին, ՔՀԿ-ների հետ համատեղ դիտարկվում են նաև ԶԼՄ-ները:

1) **Երիտասարդ մասնագետների դպրոցի ստեղծում՝ ՔՀԿ-ների և երիտասարդների կարողությունների զարգացման նպատակով**

ՔՀԿ-ների և երիտասարդների կարողությունների զարգացման նպատակով Ծրագրի շրջանակներում ստեղծվելու է Երիտասարդ մասնագետների դպրոց (Դպրոց)։ Թեև Դպրոցի անունը ենթադրում է, որ այն նախատեսված է լինելու երիտասարդների ուսումնառության համար, այդուհանդերձ Դպրոցում ընդունվելու և սովորելու հնարավորություն տրվելու է նաև ՔՀԿ-ներին, ներառյալ՝ ԶԼՄ-ներին։ Թիրախային յուրաքանչյուր խմբի, մասնավորապես՝ երիտասարդների և ՔՀԿ-ների համար մշակվելու են ուսուցման ծրագրեր և ուսումնական մոդուլներ։

1.1) ՔՀԿ-ների կարողությունների զարգացմանն ուղղված գործողությունները

Դպրոցում ՔՀԿ-ների կարողությունների զարգացմանն ուղղված ուսումնական գործընթացը կազմակերպվելու է մի քանի գործիքների միջոցով, ներառյալ՝ **առցանց և առկա հանդիպումներ ու վերապատրաստումներ, մենթորություն, լավագույն փորձի վերաբերյալ վիրտուալ այցերի կազմակերպում, իրավասու պետական մարմիններ և մասնագիտացված կառույցներ ուսումնական այցերի կազմակերպում, ինչպես նաև կարողությունների զարգացման առաջընթացի պարբերաբար գնահատում**։

1.2) ՔՀԿ-ների կարողությունների զարգացմանն ուղղված գործողությունների ժամանակացույցը

ՔՀԿ-ների կարողությունների զարգացման պլանը ունի հետևյալ ժամանակացույցը.



1.3) Երիտասարդ մասնագետների կարողությունների զարգացմանն ուղղված գործողությունները

Դպրոցում երիտասարդ մասնագետների պատրաստման և կարողությունների զարգացման նպատակով տեղի է ունենալու երիտասարդ մասնագետների **ընտրություն,**

վերապատրաստում և կրթում: Դպրոցում ուսումնական գործընթացը տևելու է 6 ամիս, որի արդյունքում ուսուցումը հաջողությամբ ավարտած լավագույն մասնագետները ընդունվելու են աշխատանքի Ծրագրի կողմից մրցույթի արդյունքում ընտրված ՔՀԿ-ներում և օժանդակելու են այդ ՔՀԿ-ներին բյուջեի վերլուծության, բյուջեի մոնիտորինգի, բյուջետային գործընթացներում մասնակցության և փաստահեն շահերի պաշտպանության իրականացման հարցում:

1.4) Երիտասարդ մասնագետների կարողությունների զարգացմանն ուղղված գործողությունների ժամանակացույցը

Երիտասարդ մասնագետների կարողությունների զարգացման պլանը ունի հետևյալ ժամանակացույցը.

1.5) Քաղաքացիների կարողությունների զարգացմանն ուղղված գործողությունները

Քաղաքացիների կարողությունների զարգացումը տեղի է ունենալու առցանց: Բյուջետային հարթակում հատուկ բաժին է նվիրված լինելու քաղաքացիների բյուջետային ոլորտում կրթմանն ու ԾՊ իրականացնելու կարողությունների զարգացմանը: Այստեղ ներբեռնվելու են Ծրագրի շրջանակներում քաղաքացիների համար հատուկ մշակած պարզ ընկալելի ուսուցողական նյութեր, այդ թվում՝ բյուջեի վերլուծության, մոնիտորինգի, պարզեցված (քաղաքացիների) բյուջեների, շահերի պաշտպանության իրականացման և բյուջետային գործընթացներում հանրային մասնակցության վերաբերյալ հայաստանյան և ԵՄ-ի փորձի ներկայացմամբ հանրամատչելի ուղեցույցներ, ինֆոգրաֆիկաներ, համառոտագրեր: Այս նյութերը օգնելու են շահագրգիռ կողմերին բյուջետային գործընթացներում ունենալ նպատակային մասնակցություն և իրականացնել արդյունավետ շահերի պաշտպանություն:

Քաղաքացիների համար վերապատրաստման ռեսուրսները հասանելի են լինելու առանց ժամանակային սահմանափակումների:

2) **Ուսուցման ծրագրի մշակում**

Ծրագրի թիմը մշակելու է 4 մոդուլներից բաղկացած ուսուցման ծրագիր: Ուսումնառության ընթացքում դասավանդվելու է 26 թեմա՝ ըստ հետևյալ բաժանումների.

1. **Պետական բյուջեներ, բյուջեի վերլուծություն և մոնիտորինգ**: Կազմված է լինելու 8 թեմաներից:
2. **Շահերի պաշտպանության իրականացում:** Կազմված է լինելու 8 թեմաներից:
3. **Կարիքահեն հարակից կարողություններ:** Կազմված է լինելու 8 թեմաներից:
4. **Չեխիայի նմանատիպ փորձ:** Կազմված է լինելու 2 թեմաներից:

Ուսուցման ծրագրերի կառուցվածքը և բովանդակությունը ներկայացված է ՔՀԿ-ների, երիտասարդ մասնագետների և քաղաքացիների կարողությունների զարգացման ուսուցման ծրագրում:

3) **Փորձագիտական խմբի ձևավորում**

Ծրագրի շրջանակներում 8-րդ ամսում ձևավորվել է բյուջետային հարցերով փորձառու փորձագետների խումբ (Փորձագետների խումբ), որտեղ ներգրավվել են 4 տեղական փորձագետներ և 1 միջազգային փորձագետ: 4 տեղական փորձագետներից երկուսը առաջադրվել են ԻՀԱ-ի կողմից, մյուս երկուսը՝ ՏՁՀԿ-ի կողմից, իսկ միջազգային փորձագետին առաջադրել է «Ազորա Սենթրլ Յուրոփ» ՀԿ-ը: Փորձագետների խումբը Ծրագրի թիմի և Ծրագրում ներգրավված մյուս փորձագետների հետ համատեղ մասնակցելու են ՔՀԿ-ների կարողությունների զարգացման գործընթացին, այդ թվում՝ Դպրոցի կրթական միջոցառումներին:

Փորձագիտական խումբը՝ ըստ նախապես հաստատված Դպրոցի գործարկման ժամանակացույցի, ՔՀԿ-ների և երիտասարդ մասնագետների համար Դպրոցում կանցկացնի դեմառդեմ վերապատրաստումներ, մենթորություն, վիրտուալ ուսումնական այցեր՝ ԵՄ-ի փորձին ծանոթանալու և փոխանակման նպատակով: Ի լրումն նշյալի, փորձագիտական խումբը ՔՀԿ-ների և երիտասարդ մասնագետների համար խորացված և պրակտիկ հմտությունների զարգացման փուլում կկարդա դասախոսություններ և կանցկացնի վարպետաց դասեր, կիրականացնի մենթորություն, ինչպես նաև կտրամադրի խորհրդատվություն՝ ՔՀԿ-ներին տրամադրվելիք ենթադրամաշնորհների իրականացման ընթացքում:

Չորրորդ՝ «Շահառու ՔՀԿ-ների և երիտասարդ մասնագետների ընտրություն և ուսումնառության գործընթացների կազմակերպում և **հինգերորդ՝** «Կարողությունների զարգացման (փոփոխություններին հետևելու) գնահատման գործիքի մշակում և ձևավորված կարողությունների գնահատում» մեթոդները և գործիքները ներկայացված են ստորև՝ սույն փաստաթղթի համապատասխան մասերում:

2.2.Զարգացման պլանի «Հարակից կարիքահեն կարողություններ» մոդուլի բաժնի մեթոդոլոգիա

Մեթոդոլոգիայի համաձայն՝ թիրախային խմբերն են ՔՀԿ-ները, ներառյալ՝ ԶԼՄ-ները, և երիտասարդները: Երիտասարդները ընդգրկվել են թիրախային խմբում այն պատճառով, որ Ծրագրի շրջանակներում նախատեսվում է Երիտասարդ մասնագետների դպրոցում 6 ամիս տևողությամբ ուսուցումների ավարտից հետո, լավագույն մասնագետներին ընդունել աշխատանքի Ծրագրի կողմից մրցույթի արդյունքում ընտրված ՔՀԿ-ներում: Հետևապես, ՔՀԿ-ներին բյուջեի վերլուծության, բյուջեի մոնիտորինգի, բյուջետային գործընթացներում մասնակցության և փաստահեն շահերի պաշտպանության իրականացման հարցում անհրաժեշտ է լինելու լրացուցիչ օժանդակություն, որոնք կարող են տրամադրել հենց այս երիտասարդները:

ՔՀԿ-ների և երիտասարդների ՇՊ իրականացնելու հմտություններին ուղղված Ծրագրի գործողությունները, այդ թվում նաև ուսումնական կոմպոնենտը, դիտարկվում են որպես **հիմնական** հմտություններ զարգացնող և գործիքակազմ տրամադրող գործողությունների փունջ, իսկ հարակից կարողությունների զարգացումը՝ որպես **օժանդակ** (լրացուցիչ) գործիքներ, որոնց տիրապետելով ՔՀԿ-ները ավելի հեշտ, արդյունավետ և թիրախային կիրականացնեն ՇՊ:

Նաև անհրաժեշտ է նշել, որ **ի տարբերություն** հարակից կարողությունների, պետական բյուջեների և ՇՊ-ների իրականացման հմտությունների զարգացումը կատարվելու է տեսական և գործնական գիտելիքների փոխանցման միջոցով՝ դիտարկելով այս երկու մակարդակները խիստ փոխլրացման մեջ, իսկ հարակից կարողությունների զարգացման մեթոդոլոգիայով մասնակիցներին առավելապես փոխանցվելու է տեսական գիտելիքներ՝ դրանք հետագայում ՔՀԿ-ում ներդնելու համար: Օրինակ՝ Բյուջեների և ՇՊ-ի ուսուցման պրոցեսը ավարտելուց հետո մասնակիցները կկատարեն իրենց նախընտրած ոլորտի բյուջեի որոշ տողերի վերլուծություն, և ապա՝ այդ մասով կմշակեն ՇՊ-ի իրականացման պլան: Այսինքն, ստացված տեսական գիտելիքները կամրապնդեն գործնական հմտություններով: Իսկ ահա կարողությունների զարգացման մասով, վերջիններս խորությամբ կպատկերացնեն, օրինակ՝ ռազմավարական պլանավորման և ֆոնդհայթայթման գործընթացները, և առաջիկա տարում կարող են մշակել իրենց ՔՀԿ-ի ռազմավարական և ֆոնդհայթայթման պլանները՝ դրանցում որպես ռազմավարական նպատակ և խնդիրներ նախատեսելով բյուջետային գործընթացում ՇՊ-ի իրականացումը:

Հենց այս մոտեցումը հիմքում ունենալով, ՔՀԿ-ների և երիտասարդների հարակից հմտությունների կարողությունների զարգացման գործընթացը կազմակերպվելու է ուսուցման առցանց փուլում, իսկ ահա Դեմառդեմ (այս փուլը ՔՀԿ-ների համար է) և Խորացված և պրակտիկ հմտությունների զարգացման (այս փուլը երիտասարդների համար է) փուլերում դասընթացները կազմակերպվելու են պետական բյուջեի, բյուջեի վերլուծության, բյուջեի մոնիտորինգի, պետական բյուջեների ոլորտներում մասնակցության, բյուջետային գործընթացում ՇՊ-ի իրականացման թեմաներով և այդ թեմաներով անցկացվելու են վարպետաց դասեր:

Հարակից կարողությունների բաժինը նույնպես իրականացվելու է Դպրոցի շրջանակներում, և մշակվելու են ուսուցման ծրագրեր և դրանցից բխող ուսումնական մոդուլներ:

Ընդհանուր առմամբ, շահառուների հարակից կարողությունների զարգացման պլանը ենթադրում է հետևյալ մեթոդների և գործիքների համադրումը՝

1) ՔՀԿ-ների և երիտասարդների կարողությունների զարգացման նպատակով դպրոցի ստեղծում,
2) Ուսուցման ծրագրերի մշակում,
3) Փորձագիտական խմբի ձևավորում,
4) Շահառու ՔՀԿ-ների և երիտասարդ մասնագետների ընտրություն և ուսումնառության գործընթացների կազմակերպում,
5) Կարողությունների զարգացման (փոփոխություններին հետևելու) գնահատման գործիքի մշակում և ձևավորված կարողությունների գնահատում՝

*Այս մեթոդների և գործիքների մասին տեղեկատվությունը ներկայացվել է Զարգացման պլանի **«Պետական բյուջե, բյուջեների վերլուծություն և մոնիտորինգ» և «Բյուջետային գործընթացի ՇՊ գործիքները»** մոդուլների բաժինների մեթոդոլոգիայի շրջանակներում: Ստորև ներկայացվում են ՔՀԿ-ների և երիտասարդ մասնագետների հարակից հմտությունների զարգացման նպատակով իրականացվող մեթոդական գործողությունները՝*

1) **ՔՀԿ-ների և երիտասարդների կարողությունների զարգացման նպատակով դպրոցի ստեղծում**

1.1) Դպրոցի շրջանակներում ՔՀԿ-ների հարակից կարողությունների զարգացմանն ուղղված գործողությունները

Դպրոցում ՔՀԿ-ների հարակից կարողությունների զարգացմանն ուղղված ուսումնական գործընթացը կազմակերպվելու է առցանց ուսուցման փուլում հետևյալ ձևաչափերով. **առցանց և առկա հանդիպումներ, կարողությունների զարգացման առաջընթացի պարբերաբար գնահատում**:

1.2) ՔՀԿ-ների հարակից կարողությունների զարգացմանն ուղղված գործողությունների ժամանակացույցը

ՔՀԿ-ների հարակից կարողությունների զարգացման պլանը իրականացվելու է նույն ժամանակացույցով, ինչպես որ ՔՀԿ-ների բյուջետային վերլուծության, մոնիտորինգի և ՇՊ-ի իրականացման կարողությունների զարգացումը՝

1.3) Երիտասարդ մասնագետների հարակից կարողությունների զարգացմանն ուղղված գործողությունները

Դպրոցում երիտասարդ մասնագետների հարակից կարողությունների զարգացմանն ուղղված ուսումնական գործընթացը կազմակերպվելու է առցանց ուսուցման փուլում հետևյալ

ձևաչափերով. **առցանց և առկա հանդիպումներ, կարողությունների զարգացման առաջընթացի պարբերաբար գնահատում**:

1.4) Երիտասարդ մասնագետների հարակից կարողությունների զարգացմանն ուղղված գործողությունների ժամանակացույցը

Երիտասարդների հարակից կարողությունների զարգացման պլանը իրականացվելու է նույն ժամանակացույցով, ինչպես որ երիտասարդների բյուջետային վերլուծության, մոնիտորինգի և ՇՊ-ի իրականացման կարողությունների զարգացումը:

3. ՔՀԿ-ների, երիտասարդ մասնագետների և քաղաքացիների կարողությունների զարգացման պլան

3.1.Թիրախային խումբ 1. ՔՀԿ-ներ, ներառյալ՝ ԶԼՄ-ներ

ՔՀԿ-ների, ներառյալ՝ ԶԼՄ-ների, կարողությունների զարգացման նպատակով կազմակերպվելու են ՔՀԿ-ների վերապատրաստման ուսուցումներ երկու հոսքով, որոնք բաղկացած կլինեն հետևյալ չորս փուլերից.



ՔՀԿ-ների կարողությունների զարգացումը կազմակերպվելու է հետևյալ երեք ուղղություններով.

1. Պետական բյուջե, բյուջեների վերլուծություն և մոնիտորինգ:
2. Բյուջետային գործընթացի շահերի պաշտպանության (ՇՊ) գործիքները:
3. Բյուջետային գործընթացի ՇՊ-ի իրականացման նպատակով ՔՀԿ-ների կարիքահեն հարակից հմտությունները:

ՔՀԿ-ների կարողությունների զարգացմանը նվիրված վերապատրաստումների երկու հոսքերին մասնակցելու են ընդհանուր թվով 40 ՔՀԿ-ների/ԶԼՄ-ների 80 ներկայացուցիչներ:

Ա. ՔՀԿ-ների վերապատրաստումների 1-ին հոսք

Նախապատրաստական և ընտրական փուլ

Ծրագրի 9-12-րդ ամիսներին կմշակվի Դպրոցի ՔՀԿ-ների վերապատրաստման ծրագիրը, վերապատրաստման մոդուլներն ու գործիքները:

Ծրագրի իրականացման 17-րդ ամսվա սկզբին ՔՀԿ-ների և ԶԼՄ-ների շրջանում առցանց լրատվամիջոցների, ՔՀԿ-ների, ՔՀԿ-ների ցանցերի, ինչպես նաև ծրագրի թիմի միջոցով հայտարարություն կտարածվի ՔՀԿ-ների վերապատրաստումների հնարավորության և

մասնակցության հայտերի ընդունման մասին: Դիմորդներից կպահանջվի լրացնել առցանց դիմում՝ ներառյալ հետաքրքրության նամակ, և կցել ՔՀԿ-ի և ԶԼՄ-ի գործունեության մասին տեղեկատվական թերթիկ: Վերապատրաստումներին մասնակցելու հնարավորություն կունենան Երևանի և բոլոր 10 մարզերի շահագրգիռ ՔՀԿ-ները և ԶԼՄ-ները, որոնց իրազեկելու նպատակով կանցկացվեն 5 իրազեկման հանդիպումներ առցանց և/կամ առկա ձևաչափերով: Դիմորդները կընտրվեն՝ հաշվի առնելով հետևյալ չափանիշները.

- ՔՀԿ-ի, ԶԼՄ-ի փորձը պետական բյուջեների, բյուջեի վերլուծության, մասնակցային բյուջետավորման և շահերի պաշտպանության ոլորտներում,
- հետաքրքրության նամակը,
- հարցազրույցի արդյունքները:

Ամեն դեպքում, ընտրության ընթացքում հնարավորինս ապահովվելու են գենդերային հավասարությունը, ինչպես նաև Երևանից և ՀՀ մարզերից ՔՀԿ-ների և ԶԼՄ-ների ներգրավվածության համաչափությունը:

Առաջին հոսքին ընտրվելու են 20 ՔՀԿ-ների և ԶԼՄ-ների 40 ներկայացուցիչներ:

Առցանց ուսուցման փուլ

ՔՀԿ-ների և ԶԼՄ-ների 1-ին հոսքի 20 ՔՀԿ-ների 40 ներկայացուցիչներ (մասնակիցներ) կանցնեն առցանց դասընթաց, որը բաղկացած կլինեն հետևյալ 4 մոդուլներից, որոնք էլ կազմված են լինելու ընդհանուր թվով 26 առանձին թեմաներից.

1) **Պետական բյուջեներ, բյուջեի վերլուծություն և մոնիտորինգ**: Կազմված է լինելու 8 թեմաներից:
2) **Շահերի պաշտպանության իրականացում:** Կազմված է լինելու 8 թեմաներից:
3) **Կարիքահեն հարակից կարողություններ:** Կազմված է լինելու 8 թեմաներից:
4) **Չեխիայի նմանատիպ փորձ:** Կազմված է լինելու 2 թեմաներից:



ՔՀԿ-ների առցանց ուսուցման հարթակը կներառվի Բյուջետային գիտելիքի փոխանակման և ուսուցման հարթակի (Բյուջետային Հարթակ) շրջանակներում:

Առցանց ուսուցման յուրաքանչյուր թեմա բաղկացած կլինի՝

- ✓ տեսանյութից, որը կլինի 5-7 րոպե տևողությամբ, և փորձագետը կներկայացնի թեմայի հիմնական կետերը և ուշադրության արժանի կարևոր հղումները,

- ✓ տեքստային նյութից, որը կներկայացնի թեմայի հիմնական բովանդակությունը և բուն նյութը: Այն կարող է ներառել նաև ինֆոգրաֆիկա, որը վիզուալ առումով կգրավի մասնակցի ուշադրությունը կարևոր տեղեկատվության շուրջ,
- ✓ ներկայացումից, որը ամփոփ կերպով մասնակցին կտրամադրի թեմայի վերաբերյալ հիմնական հաղորդագրությունները (Key messages Power Point Presentation),
- ✓ լրացուցիչ նյութերից, որոնք կարող են պարունակել ինչպես կցված նյութեր, այնպես էլ՝ էլեկտրոնային հղումներ,
- ✓ թեմայի շուրջ 10 հարցից բաղկացած հարցաշար-քուիզից, որտեղ մասնակիցը պետք է պատասխանի յուրաքանչյուր թեմայի վերաբերյալ հարցերի ութսուն տոկոսին կամ ավելիին, որից հետո ուսուցման հարթակը թույլ կտա ավտոմատ կերպով անցնել հաջորդ թեմային:



Առաջին երեք մոդուլների առաջին չորս թեմաները ավարտելուց հետո մասնակիցները հնարավորություն կունենան քննարկում ունենալ տվյալ մոդուլի համար պատասխանատու թիմի անդամների հետ: Եվս մեկ քննարկում նույն կազմի հետ մասնակիցները կունենան առաջին երեք մոդուլների հինգից ութերորդ թեմաները ավարտելուց հետո:

Չորրորդ մոդուլի համար պատասխանատու թիմի հետ մասնակիցները քննարկում կունենան մոդուլի ամբողջական ավարտից հետո:

Մոդուլների համար պատասխանատու կազմակերպությունները.

Մոդուլը	**Պատասխանատու կազմակերպությունը**
Մոդուլ 1. Պետական բյուջեներ, բյուջեի վերլուծություն և մոնիթորինգ	ՏԶՀԿ
Մոդուլ 2. Շահերի պաշտպանության իրականացում	ԻՀԱ
Մոդուլ 3. Կարիքահեն հարակից կարողություններ	ԻՀԱ
Մոդուլ 4. Չեխիայի նմանատիպ փորձ	«Ազորա Սենթրլ Յուրոփ» ՀԿ

Առցանց ուսուցման բոլոր թեմաների հաջող ավարտից հետո առցանց հարթակը թույլ կտա համակարգից ներբեռնել և տպել Դպրոցի ՔՀԿ-ների կարողությունների զարգացմանը նվիրված վերապատրաստման առցանց փուլի ավարտական վկայականը:

Դեմառդեմ ուսուցման փուլ

Ծրագրի 20-21-րդ ամիսներին ուսուցման 40 մասնակիցներ կմասնակցեն 12-օրյա դասընթացին (շաբաթը մեկ օր տևողությամբ), որի ընթացքում կունկնդրեն դասախոսություններ, վարպետաց դասեր ուսուցանված մոդուլների և դրանց թեմաների շուրջ, որը ներառելու է նաև առանձին դասախոսություններ և վարպետաց դասեր պետական բյուջեի, բյուջեի վերլուծության, բյուջեի մոնիտորինգի, բյուջետային գործընթացներում մասնակցության, փաստահեն շահերի պաշտպանության իրականացման թեմաներով: Ի լրումն, մասնակիցները կկատարեն խմբային և անհատական վերլուծական աշխատանքներ, այդ թվում՝ իրավիճակային խնդիրների լուծում: Ընդհանուր թվով Դեմառդեմ ուսուցման փուլի 12 օրյա դասընթացը բաղկացած կլինի 8 թեմաներից և 4 վարպետաց դասերից հետևյալ գրաֆիկով.

Դասերի օրերը	Թեման	Տևողությունը	Պատասխանատու
Օր 1-ին	Պետական բյուջեի, բյուջեի վերլուծության թեմաներով	4 ժամ, որից 2-ը ժամը՝ դասախոսություն, 2 ժամը՝ գործնական աշխատանք	ՏԶՀԿ
Օր 2-րդ	Պետական բյուջեի, բյուջեի վերլուծության թեմաներով	4 ժամ, որից 2-ը ժամը՝ դասախոսություն, 2 ժամը՝ գործնական աշխատանք	ՏԶՀԿ
Օր 3-րդ	Մասնակցությունը պետական բյուջեների ոլորտներում	4 ժամ, որից 2-ը ժամը՝ դասախոսություն, 2 ժամը՝ գործնական աշխատանք	ԻՀԱ
Օր 4-րդ	Մասնակցությունը պետական բյուջեների ոլորտներում	4 ժամ, որից 2-ը ժամը՝ դասախոսություն, 2 ժամը՝ գործնական աշխատանք	ԻՀԱ
Օր 5-րդ	Բյուջետային ծրագրերի գնահատում և մոնիթորինգ	4 ժամ, որից 2-ը ժամը՝ դասախոսություն, 2 ժամը՝ գործնական աշխատանք	ՏԶՀԿ
Օր 6-րդ	Բյուջետավորման նոր մոտեցումները	4 ժամ, որից 2-ը ժամը՝ դասախոսություն, 2 ժամը՝ գործնական աշխատանք	ՏԶՀԿ
Օր 7-րդ	ՇՊ-ի իրականացումը բյուջետային գործընթացում	4 ժամ, որից 2-ը ժամը՝ դասախոսություն, 2 ժամը՝ գործնական աշխատանք	ԻՀԱ
Օր 8-րդ	ՇՊ-ի իրականացումը բյուջետային գործընթացում	4 ժամ, որից 2-ը ժամը՝ դասախոսություն, 2 ժամը՝ գործնական աշխատանք	ԻՀԱ

Օր 9-րդ	Վարպետաց դաս փորձառու փորձագետների կողմից՝ պետական բյուջեի, բյուջեի վերլուծության ոլորտում	4 ժամ, որից 2-ը ժամը՝ դասախոսություն, 2 ժամը՝ գործնական աշխատանք	ՏՁՀԿ
Օր 10-րդ	Վարպետաց դաս փորձառու փորձագետների կողմից՝ պետական բյուջեի, բյուջեի վերլուծության ոլորտում	4 ժամ, որից 2-ը ժամը՝ դասախոսություն, 2 ժամը՝ գործնական աշխատանք	ՏՁՀԿ
Օր 11-րդ	Վարպետաց դաս փորձառու փորձագետների կողմից՝ պետական բյուջեների ոլորտներում մասնակցության վերաբերալ	4 ժամ, որից 2-ը ժամը՝ դասախոսություն, 2 ժամը՝ գործնական աշխատանք	ԻՀԱ
Օր 12-րդ	Վարպետաց դաս փորձառու փորձագետների կողմից՝ պետական բյուջեների ոլորտներում ՇՊ-ի վերաբերալ	4 ժամ, որից 2-ը ժամը՝ դասախոսություն, 2 ժամը՝ գործնական աշխատանք	ԻՀԱ

Վիրտուալ և առկա ուսումնական այց՝ մենթորության և ԵՄ-ի փորձի փոխանակման փուլ

Ծրագրի 22-րդ ամսում Դպրոցի ՔՀԿ-ների և ՁԼՄ-ների 40 մասնակիցներ փորձագիտական խմբի/մենթորների աջակցությամբ կխորացնեն իրենց գործնական գիտելիքները պետական բյուջեների, բյուջեի վերլուծության և պետական բյուջեների մոնիտորինգի, շահերի պաշտպանության իրականացման և բյուջետային մասնակցության ոլորտներում: Հարկ է նշել, որ բոլոր թեմաները դասավանդվելու են միմյանց հետ փոխկապակցվածության մեջ: Օրինակ՝ բյուջեի վերլուծության և մոնիտորինգի վերաբերյալ գործնական գիտելիքների ստացումից հետո, մասնակիցը կոնկրետ գործիքների միջոցով կիրականացնի վերլուծության և մոնիտորինգի արդյունքում հատկորոշած հիմնախնդրի շահերի պաշտպանության վարժություն: Այս փուլում մասնակիցները նաև կստանան մասնագիտական խորհրդատվություն վերը նշված թեմաների վերաբերյալ, կայցելեն թիրախային պետական մարմիններ (օրինակ՝ ՀՀ կառավարություն, այդ թվում՝ ֆինանսների Արդարադատության, Գյուղատնտեսության, Աշխատանքի և սոցիալական հարցերի, ինչպես նաև Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններ, Ազգային ժողով և այլն), ոլորտային մասնավոր, միջազգային և տեղական ՔՀԿ-ներ, կմասնակցեն չեխական փորձի ուսումնասիրման ու փոխանակմանը նվիրված վիրտուալ վեբինարների, որտեղ կծանոթանան չեխական և ԵՄ-ի պրակտիկ աշխատանքներին թիրախային ոլորտներում:

Ընդհանուր առմամբ, նախատեսված է կազմակերպել 12 այց, որից 10-ը՝ տեղական այցեր ՀՀ-ում առկա ձևաչափով (անհրաժեշտության դեպքում՝ տեղական այցերը հնարավոր է կազմակերպվեն հիբրիդային և առցանց տարբերակով): Մյուս 2 այցերը կկազմակերպվեն վիրտուալ՝ չեխական գործընկերների կողմից պատրաստած վեբինարին մասնակցելու միջոցով:



Բ. ՔՀԿ-ների վերապատրաստումների 2-րդ հոսք

ՔՀԿ-ների վերապատրաստումների 2-րդ հոսքի կազմակերպման աշխատանքները կսկսեն ծրագրի 25-րդ ամսից և կավարտվեն 30-րդ ամսին: 2-րդ հոսքի ուսումնական գործընթացը կազմակերպվելու է նույն մեթոդներով և գործիքներով, ինչպես 1-ին հոսքի դեպքում: 2-րդ հոսքի ընթացքում իրենց կարողությունները կզարգացնեն ևս 20 ՔՀԿ-ների 40 ներկայացուցիչներ/մասնակիցներ:

3.2.Թիրախային խումբ 2. Երիտասարդ մասնագետներ

Երիտասարդ մասնագետների կարողությունների զարգացման նպատակով կազմակերպվելու են երիտասարդ մասնագետների կրթման և նրանց կարողությունների զարգացմանն ուղղված վերապատրաստումներ երկու հոսքով, որոնք բաղկացած կլինեն հետևյալ հինգ փուլերից.



Երիտասարդ մասնագետների կարողությունների զարգացումը կազմակերպվելու է հետևյալ երեք ուղղություններով.

1. Պետական բյուջե, բյուջեների վերլուծություն և մոնիտորինգ։
2. Բյուջետային գործընթացի ՇՊ գործիքները։
3. Բյուջետային գործընթացի ՇՊ-ի իրականացման նպատակով ՔՀԿ-ների կարիքահեն հարակից հմտությունները։

Երիտասարդների կարողությունների զարգացմանը նվիրված վերապատրաստումների երկու հոսքերին մասնակցելու են ընդհանուր թվով 200 հայտատու, յուրաքանչյուր հոսքում ունենալով 100 հայտատու։

Ա. Երիտասարդ մասնագետների ուսուցման 1-ին հոսք

Նախապատրաստական և ընտրական փուլ

Ծրագրի իրականացման 9-12-րդ ամիսներին կմշակվի Դպրոցի երիտասարդ մասնագետների վերապատրաստման ծրագիրը, վերապատրաստման մոդուլներն ու գործիքները։

Ծրագրի իրականացման 17-րդ ամսվա սկզբին երիտասարդների շրջանում, այդ թվում՝ բարձրագույն ուսումնական հաստատություններում (բուհերում) (կընտրվեն հիմնականում ֆինանսատնտեսական մասնագիտացումներ ունեցող բուհերը) հայտարարություն կտարածվի Դպրոց ընդունվելու և վերապատրաստվելու հնարավորության վերաբերյալ։ Դիմորդներից կպահանջվի լրացնել առցանց դիմում՝ ներառյալ հետաքրքրության նամակ, և կցել ինքնակենսագրականը (CV)։ Դպրոցում սովորելու հնարավորություն կունենան Երևանի և ՀՀ 10 մարզերի հետաքրքրված երիտասարդներն ու ուսանողները, որոնց իրազեկելու նպատակով կանցկացվեն իրազեկման հանդիպումներ առցանց և/կամ առկա ձևաչափերով։ Դիմորդները կընտրվեն՝ ելնելով նրանց մասնագիտությունից, հետաքրքրության նամակից, փորձից (կամավորական աշխատանք) և հարցազրույցի արդյունքներից։ Ընտրության ընթացքում հնարավորինս ապահովվելու է գենդերային հավասարությունը։

Հիշյալի արդյունքներով կընտրվեն 100 լավագույն դիմորդները։

Առցանց ուսուցման փուլ

Դպրոցի 1-ին հոսքի 100 ուսանողներ կանցնեն առցանց դասընթաց, որը բաղկացած կլինի 4 մոդուլներից, որոնք էլ կազմված են լինելու ընդհանուր թվով 26 առանձին թեմաներից.

1. **Պետական բյուջեներ, բյուջեի վերլուծություն և մոնիտորինգ**։ Կազմված է լինելու 8 թեմաներից։
2. **Շահերի պաշտպանության իրականացում։** Կազմված է լինելու 8 թեմաներից։
3. **Կարիքահեն հարակից կարողությունների զարգացման հմտություններ։** Կազմված է լինելու 8 թեմաներից։
4. **Չեխիայի նմանատիպ փորձ։** Կազմված է լինելու 2 թեմաներից։



Դպրոցում երիտասարդ մասնագետների առցանց ուսուցման հարթակը կներառվի Բյուջետային Հարթակի շրջանակներում:

Առցանց ուսուցման յուրաքանչյուր թեմա բաղկացած կլինի՝

- ✓ տեսանյութից, որը կլինի 5-7 րոպե տևողությամբ, և փորձագետը կներկայացնի թեմայի հիմնական կետերը և ուշադրության արժանի կարևոր հղումները,
- ✓ տեքստային նյութից, որը կներկայացնի թեմայի հիմնական բովանդակությունը և բուն նյութը: Այն կարող է ներառել նաև ինֆոգրաֆիկա, որը վիզուալ առումով կգրավի մասնակցի ուշադրությունը կարևոր տեղեկատվության շուրջ,
- ✓ ներկայացումից, որը ամփոփ կերպով մասնակցին կտրամադրի թեմայի վերաբերյալ հիմնական հաղորդագրությունները (Key messages Power Point Presentation),
- ✓ լրացուցիչ նյութերից, որոնք կարող են պարունակել ինչպես կցված նյութեր, այնպես էլ՝ էլեկտրոնային հղումներ,
- ✓ թեմայի շուրջ 10 հարցից բաղկացած հարցաշար-քուիզից, որտեղ մասնակիցը պետք է պատասխանի յուրաքանչյուր թեմայի վերաբերյալ հարցերի ութսուն տոկոսին կամ ավելիին, որից հետո ուսուցման հարթակը թույլ կտա ավտոմատ կերպով անցնել հաջորդ թեմային:



Առաջին երեք մոդուլների առաջին չորս թեմաները ավարտելուց հետո մասնակիցները հնարավորություն կունենան քննարկում ունենալ տվյալ մոդուլի համար պատասխանատու թիմի անդամների հետ: Եվս մեկ քննարկում նույն կազմի հետ մասնակիցները կունենան առաջին երեք մոդուլների հինգից ութերորդ թեմաները ավարտելուց հետո:

Չորրորդ մոդուլի համար պատասխանատու թիմի հետ մասնակիցները քննարկում կունենան մոդուլի ամբողջական ավարտից հետո:

Մոդուլների համար պատասխանատու կազմակերպությունները.

Մոդուլը	**Պատասխանատու կազմակերպությունը**
Մոդուլ 1. Պետական բյուջեներ, բյուջեի վերլուծություն և մոնիտորինգ	ՏԶՀԿ
Մոդուլ 2. Շահերի պաշտպանության իրականացում	ԻՀԱ
Մոդուլ 3. Կարիքահեն հարակից կարողություններ:	ԻՀԱ
Մոդուլ 3. Չեխիայի նմանատիպ փորձ	«Ագորա Սենթրլ Յուրոփ» ՀԿ

Առցանց ուսուցման բոլոր թեմաների հաջող ավարտից հետո առցանց հարթակը թույլ կտա համակարգից ներբեռնել և տպել Դպրոցի երիտասարդ մասնագետների կարողությունների զարգացմանը նվիրված վերապատրաստման առցանց փուլի ավարտական վկայականը:

Առցանց փուլի արդյունքների հիման վրա, որը հաշվարկվելու է առցանց ուսուցման ընթացքում ստացված միավորներով, հեռավար քննարկումներին ցուցաբերած մասնակցությամբ, ակտիվության և հետաքրքրվածության չափանիշներով, ինչպես նաև հարցազրույցի արդյունքներով, 15 լավագույն ուսանողներ կընտրվեն և հնարավորություն կունենան մասնակցելու դպրոցի հաջորդ փուլերին (խորացված և պրակտիկ հմտությունների զարգացման փուլ, հանրային իրազեկման փուլ, ընտրական փուլ):

Խորացված և պրակտիկ հմտությունների զարգացման փուլ

Ծրագրի 20-21-րդ ամիսների ընթացքում Դպրոցի 15 ուսանողներ կմասնակցեն 12-օրյա դասընթացին (շաբաթական մեկ օր տևողությամբ), որի ընթացքում կլսեն դասախոսություններ, վարպետաց դասեր ուսուցանված մոդուլների և դրանց թեմաների շուրջ: Ի լրումն, մասնակիցները կկատարեն խմբային և անհատական վերլուծական աշխատանք: Այս փուլի շրջանակներում 22-րդ ամսվա ընթացքում դպրոցի սաները կայցելեն նաև համապատասխան մարմիններ (օրինակ՝ ՀՀ կառավարություն, այդ թվում՝ ֆինանսների, Արդարադատության, Գյուղատնտեսության, Աշխատանքի և սոցիալական հարցերի, ինչպես նաև Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններ, Ազգային ժողով և այլն), ոլորտային մասնավոր, միջազգային և տեղական ՔՀԿ-ներ, և գործնականում կծանոթանան այս ոլորտների գործունեությանը և փորձին:

Ընդհանուր թվով Խորացված և պրակտիկ հմտությունների զարգացման փուլի 12 օրյա դասընթացը բաղկացած կլինի 8 թեմաներից և 4 վարպետաց դասերից հետևյալ գրաֆիկով.

Դասերի օրերը	Թեման	Տևողությունը	Պատասխանատու
Օր 1-ին	Պետական բյուջեի, բյուջեի վերլուծության թեմաներով	4 ժամ, որից 2-ը ժամը՝ դասախոսություն, 2 ժամը՝ գործնական աշխատանք	ՏՋՀԿ
Օր 2-րդ	Պետական բյուջեի, բյուջեի վերլուծության թեմաներով	4 ժամ, որից 2-ը ժամը՝ դասախոսություն, 2 ժամը՝ գործնական աշխատանք	ՏՋՀԿ
Օր 3-րդ	Մասնակցությունը պետական բյուջեների ոլորտներում	4 ժամ, որից 2-ը ժամը՝ դասախոսություն, 2 ժամը՝ գործնական աշխատանք	ԻՀԱ
Օր 4-րդ	Մասնակցությունը պետական բյուջեների ոլորտներում	4 ժամ, որից 2-ը ժամը՝ դասախոսություն, 2 ժամը՝ գործնական աշխատանք	ԻՀԱ
Օր 5-րդ	Բյուջետային ծրագրերի գնահատում և մոնիթորինգ	4 ժամ, որից 2-ը ժամը՝ դասախոսություն, 2 ժամը՝ գործնական աշխատանք	ՏՋՀԿ
Օր 6-րդ	Բյուջետավորման նոր մոտեցումները	4 ժամ, որից 2-ը ժամը՝ դասախոսություն, 2 ժամը՝ գործնական աշխատանք	ՏՋՀԿ
Օր 7-րդ	ՇՊ-ի իրականացումը բյուջետային գործընթացում	4 ժամ, որից 2-ը ժամը՝ դասախոսություն, 2 ժամը՝ գործնական աշխատանք	ԻՀԱ
Օր 8-րդ	ՇՊ-ի իրականացումը բյուջետային գործընթացում	4 ժամ, որից 2-ը ժամը՝ դասախոսություն, 2 ժամը՝ գործնական աշխատանք	ԻՀԱ
Օր 9-րդ	Վարպետաց դաս փորձառու փորձագետների կողմից՝ պետական բյուջեի, բյուջեի վերլուծության ոլորտում	4 ժամ, որից 2-ը ժամը՝ դասախոսություն, 2 ժամը՝ գործնական աշխատանք	ՏՋՀԿ
Օր 10-րդ	Վարպետաց դաս փորձառու փորձագետների կողմից՝ պետական բյուջեի, բյուջեի վերլուծության ոլորտում	4 ժամ, որից 2-ը ժամը՝ դասախոսություն, 2 ժամը՝ գործնական աշխատանք	ՏՋՀԿ
Օր 11-րդ	Վարպետաց դաս փորձառու փորձագետների կողմից՝ պետական բյուջեների ոլորտներում մասնակցության վերաբերալ	4 ժամ, որից 2-ը ժամը՝ դասախոսություն, 2 ժամը՝ գործնական աշխատանք	ԻՀԱ
Օր 12-րդ	Վարպետաց դաս փորձառու փորձագետների կողմից՝ պետական բյուջեների ոլորտներում ՇՊ-ի վերաբերալ	4 ժամ, որից 2-ը ժամը՝ դասախոսություն, 2 ժամը՝ գործնական աշխատանք	ԻՀԱ

Հանրային իրազեկման փուլ

Ծրագրի 22-րդ ամսվա ընթացքում Դպրոցի 15 ուսանողները բուհերի ֆինանսատնտեսական մասնագիտությունների գծով ուսանողների համար կանցկացնեն հանրային իրազեկման սեմինարներ՝ իրենց ուսուցանված առնվազն մեկ թեմաներից մեկով: Այս փուլը նպատակ ունի այլ ուսանողների շրջանում առաջացնել հետաքրքրություն և փոխանցել գիտելիքներ հանրության մասնակցության ապահովման և շահերի պաշտպանության իրականացման վերաբերյալ: Նշենք նաև, որ բյուջեի վերլուծության և մոնիտորինգի, պետական բյուջեների վերաբերյալ թեմաները ևս ընդգրկված են լինելու հանրային իրազեկման սեմինարի շրջանակներում: Նախատեսվել է, որ ընդհանուր առմամբ 15 ուսանող կանցկացնի 15 իրազեկման սեմինար, որոնցից յուրաքանչյուրին կմասնակցի 10 հոգի:

Ընտրական փուլ

Ծրագրի 24-րդ ամսվա վերջին շաբաթվա ընթացքում Դպրոցի 1-ին հոսքի 15 շրջանավարտներից առաջին 6 հոգին կընտրվեն և Ծրագրի 25-ից 36-րդ ամիսների ընթացքում՝ աշխատանքային պայմանագրի հիման վրա կներգրավվեն ՔՀԿ-ների բյուջեի վերլուծության և շահերի պաշտպանության աշխատանքներում որպես երիտասարդ մասնագետներ: Երիտասարդների հետ աշխատանքային պայմանագիրը կկնքվի Ծրագրի կողմից մրցույթի արդյունքներով ՔՀԿ-ներին տրամադրվող ենթադրամաշնորհների շրջանակներում:

Բ. Երիտասարդ մասնագետների ուսուցման 2-րդ հոսք

Երիտասարդ մասնագետների Դպրոցի 2-րդ հոսքի աշխատանքները կսկսվեն Ծրագրի 25-րդ ամսին և կավարտվեն 30-րդ ամսին: 2-րդ հոսքի ուսումնական գործընթացը կազմակերպվելու է նույն մեթոդներով և գործիքներով, ինչպես 1-ին հոսքի դեպքում:

Ծրագրի 32-րդ ամսվա վերջին շաբաթվա ընթացքում Դպրոցի 2-րդ հոսքի 15 շրջանավարտներից 6-ը կընտրվեն և Ծրագրի 33-ից 44-րդ ամիսների ընթացքում՝ աշխատանքային պայմանագրի հիման վրա կներգրավվեն ՔՀԿ-ների բյուջեի վերլուծության և շահերի պաշտպանության աշխատանքներում որպես երիտասարդ մասնագետներ: Երիտասարդների հետ աշխատանքային պայմանագիրը կկնքվի Ծրագրի կողմից մրցույթի արդյունքներով ՔՀԿ-ներին տրամադրվող ենթադրամաշնորհների շրջանակներում:

Այսպիսով, Դպրոցի 1-ին և 2-րդ հոսքերում խորացված և պրակտիկ հմտությունների զարգացման փուլին մասնակցած 30 երիտասարդ մասնագետներից 12-ը կաշխատեն Ծրագրի կողմից ՔՀԿ-ներին տրամադրվող ենթադրամաշնորհների շրջանակներում:

Երիտասարդ մասնագետների ռեեստր

Երիտասարդ մասնագետների ռեեստրը (Ռեեստր) ստեղծվելու է Բյուջետային հարթակի շրջանակներում: Այն հանդիսանալու է պետական բյուջեների ոլորտում երիտասարդ մասնագետների վերաբերյալ տեղեկատվական բազա (դատաբազա), որից օգտվելու հնարավորություն են ունենալու ոլորտային գերատեսչություններն ու կազմակերպությունները, ինչպես օրինակ՝ ՀՀ ֆինանսների, Արդարադատության, Գյուղատնտեսության, Աշխատանքի և սոցիալական հարցերի, Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, ՀՀ ազգային ժողովը և այլն: Դատաբազայի նպատակն է՝ կարիք ունեցող գերատեսչություններին և կազմակերպություններին տրամադրել հնարավորություն օգտվել Ծրագրի շրջանակներում ուսուցանված և հմտություններ ստացած երիտասարդ մասնագետների կարողություններից:

Ռեեստրում ներառվելու են Դպրոցի 1-ին և 2-րդ հոսքերի առցանց ուսուցումն անցած 200 երիտասարդ մասնագետների տվյալները, խորացված և պրակտիկ հմտությունների զարգացման փուլին մասնակցած 30 երիտասարդ մասնագետներից 18-ի տվյալները, որոնք չեն ընդունվել աշխատանքի, ինչպես նաև 12 հոգու տվյալները, որոնք ընդունվել են աշխատանքի՝ ՔՀԿ-ներին բյուջետային գործընթացներում օժանդակելու և մասնակցությունն ապահովելու նպատակով:

3.3.Թիրախային խումբ 3. Քաղաքացիներ

Քաղաքացիների ուսուցումը կազմակերպվելու է առցանց: Բյուջետային հարթակում հատուկ բաժին է նվիրված լինելու քաղաքացիների բյուջետային ոլորտում կրթմանն ու ԾՊ իրականացնելու կարողությունների զարգացմանը: Այստեղ ներբեռնվելու են Ծրագրի շրջանակներում քաղաքացիների համար հատուկ մշակած պարզ, ընկալելի ուսուցողական նյութեր, այդ թվում՝ բյուջեի վերլուծության, մոնիտորինգի, պարզեցված (քաղաքացիների) բյուջեների, շահերի պաշտպանության իրականացման և բյուջետային գործընթացներում հանրային մասնակցության վերաբերյալ հայաստանյան և ԵՄ-ի փորձի ներկայացմամբ հանրամատչելի ուղեցույցներ, ինֆոգրաֆիկաներ, համառոտագրեր: Այս նյութերը օգնելու են շահագրգիռ կողմերին բյուջետային գործընթացներում ունենալ նպատակային մասնակցություն և իրականացնել արդյունավետ շահերի պաշտպանություն: Քաղաքացիների ուսուցումը կազմակերպելու նպատակով ՔՀԿ-ների, ՔՀԿ-ների ցանցերի, ինչպես նաև ծրագրի թիմի միջոցով հայտարարություն կտարածվի քաղաքացիների ուսուցման հնարավորության և մասնակցության հայտերի ընդունման մասին:

Քաղաքացիների ուսուցումը կազմակերպելու նպատակով ՔՀԿ-ների, ՔՀԿ-ների ցանցերի, ինչպես նաև ծրագրի թիմի միջոցով հայտարարություն կտարածվի քաղաքացիների ուսուցման հնարավորության և մասնակցության հայտերի ընդունման մասին:

Քաղաքացիներից կպահանջվի լրացնել առցանց դիմում՝ ներառյալ հետաքրքրության նամակ: Քաղաքացիների մասնակցության նվազագույն կամ առավելագույն շեմ նախատեսված չէ, այն բաց է լինելու բոլոր հետաքրքրված անձանց համար՝ Երևանից և ՀՀ մարզերից:

Քաղաքացիների առցանց ուսուցման դասընթացը բաղկացած կլինի հետևյալ 4 թեմաներից.



Քաղաքացիների առցանց ուսուցման թեմաները բաղկացած են լինելու՝

- ✓ տեքստային նյութից, որը հանրամատչելի եղանակով կներկայացնի թեմայի հիմնական բովանդակությունը և բուն նյութը: Այն կարող է ներառել նաև ինֆոգրաֆիկա, որը վիզուալ առումով կգրավի մասնակցի ուշադրությունը կարևոր տեղեկատվության շուրջ,
- ✓ ներկայացումից, որը ամփոփ կերպով մասնակցին կտրամադրի թեմայի վերաբերյալ հիմնական հաղորդագրությունները (Key messages Power Point Presentation),
- ✓ լրացուցիչ նյութերից, որոնք կարող են պարունակել ինչպես կցված նյութեր, այնպես էլ՝ էլեկտրոնային հղումներ,
- ✓ ենթաթեմայի շուրջ 10 հարցից բաղկացած հարցաշար-քուիզից, որտեղ մասնակիցը պետք է պատասխանի յուրաքանչյուր թեմայի վերաբերյալ հարցերի ութսուն տոկոսին կամ ավելիին, որից հետո ուսուցման հարթակը թույլ կտա ավտոմատ կերպով անցնել հաջորդ թեմային:



Առցանց ուսուցման բոլոր թեմաների հաջող ավարտից հետո առցանց հարթակը թույլ կտա համակարգից ներբեռնել և տպել Հարթակի քաղաքացիների կարողությունների զարգացմանը նվիրված վերապատրաստման առցանց փուլի ավարտական վկայականը:

4. ՔՀԿ-ների, երիտասարդ մասնագետների և քաղաքացիների կարողությունների զարգացման գնահատման գործիքի մեթոդոլոգիա

Ծրագրի շրջանակներում նախատեսված էր մշակել գործիք, որը գնահատելու և հետևելու է ուսուցանված ՔՀԿ-ների և երիտասարդ մասնագետների կարողությունների զարգացման փոփոխությունը: Այդուհանդերձ, առաջնորդելով այն մոտեցմամբ, որ Ծրագրի թիրախային խմբերն են ոչ միայն ՔՀԿ-ները և երիտասարդ մասնագետները, այլև քաղաքացիները, ծրագրային թիմը նպատակահարմար գտավ մշակել նաև քաղաքացիների կարողությունների փոփոխությունը գնահատելու և հետևելու գործիք:

Այս գործիքը մշակվել է ՔՀԿ-ների կարողությունների զարգացման պլանի հիման վրա: Այն նպատակ ունի օգնել գնահատելու ՔՀԿ-ների, երիտասարդ մասնագետների և քաղաքացիների պետական բյուջեի, բյուջեի վերլուծության և մոնիտորինգի, բյուջետային մասնակցության և շահերի պաշտպանության իրականացման կարողությունների զարգացման և փոփոխման ընթացքը և ստացված վերջնարդյունքը, որը հնարավորություն կտա Ծրագրի թիմին գնահատել՝ թե որքանո՞վ են իրականում Ծրագրի շրջանակներում կատարված կրթական բաղադրիչները նպաստել թիրախային խմբերի կարողությունների և հմտությունների զարգացմանը:

Վերապատրաստման մասնակիցների կարողությունների փոփոխության գնահատումը տեղի է ունենալու պարբերաբար, հետևապես Գնահատման գործիքը մշակվել և կիրառվելու է թիրախային խմբերի վերապատրաստման բոլոր փուլերի ընթացքում:

Միաժամանակ, նկատի ունենալով, որ «Կարիքահեն հարակից կարողություններ» մոդուլը ունի **օժանդակ դերը**, սույն Գնահատման գործիքը, **ի տարբերություն** մյուս մոդուլների գործիքի, չի լինի այն նույն բարդությամբ և խորությամբ:

4.1. ՔՀԿ-ների և ԶԼՄ-ների կարողությունների փոփոխությունը գնահատելու և հետևելու գործիքը (Գնահատման գործիքը)

ՔՀԿ-ների և ԶԼՄ-ների կարողությունների փոփոխության գնահատումը իրականացվելու է հետևյալ չորս մոդուլներով.



Գնահատման գործիքով ստուգվելու են վերապատրաստման հետևյալ փուլերում ձեռք բերված գիտելիքներն ու կարողությունները.



Առցանց ուսուցման փուլի Գնահատման գործիքը իրենից ներկայացնում է թեմայի շուրջ 10 հարցից բաղկացած հարցաշար-քուիզից, որտեղ մասնակիցը պետք է պատասխանի յուրաքանչյուր թեմայի վերաբերյալ հարցերի ութսուն տոկոսին կամ ավելիին, որից հետո ուսուցման հարթակը թույլ կտա ավտոմատ կերպով անցնել հաջորդ թեմային: Հարցաշարերը ձևավորվելու են բոլոր **չորս մոդուլների** վերաբերյալ: Յուրաքանչյուր հարց ունենալու է չորս տարբերակ պատասխան՝ մեկ ճիշտ պատասխանի հնարավորությամբ:

Դեմառդեմ ուսուցման փուլի Գնահատման գործիքը իրենից ներկայացնում է յուրաքանչյուր հանդիպման շրջանակներում քննարկվելիք թեմայի (թեմաների) շուրջ 10 հարցից բաղկացած նախնական (pre) և վերջնական (post) հարցաշար-քուիզ, որը թույլ կտա հետևել մասնակցի գիտելիքի փոփոխությանը և ստուգել գիտելիքների աճը (զարգացումը): Այս փուլի շրջանակներում գնահատվելու են առաջին և երկրորդ մոդուլներով ձեռք բերված գիտելիքներն ու կարողությունները:

Վիրտուալ ուսուցման փուլի առանձին գնահատում չի կատարվում, քանի որ վիրտուալ փուլում քննարկվելու է **«Առցանց»** և **«Դեմառդեմ»** ուսուցման փուլերի ընթացքում քննարկված թեմաները և դրանց գնահատումը կատարվել է համապատասխան փուլերի ընթացքում:

4.2. Երիտասարդ մասնագետների կարողությունների փոփոխությունը գնահատելու և հետևելու գործիքը (Գնահատման գործիքը)

Երիտասարդ մասնագետների կարողությունների փոփոխության գնահատումը իրականացվելու է հետևյալ չորս մոդուլներով.



Գնահատման գործիքով ստուգվելու են վերապատրաստման հետևյալ փուլերում ձեռք բերված գիտելիքներն ու կարողությունները.

Առցանց ուսուցման փուլի Գնահատման գործիքը իրենից ներկայացնում է թեմայի շուրջ 10 հարցից բաղկացած հարցաշար-քուիզից, որտեղ մասնակիցը պետք է պատասխանի յուրաքանչյուր թեմայի վերաբերյալ հարցերի ութսուն տոկոսին կամ ավելիին, որից հետո ուսուցման հարթակը թույլ կտա ավտոմատ կերպով անցնել հաջորդ թեմային: Հարցաշարերը ձևավորվելու են բոլոր **չորս մոդուլների** վերաբերյալ: Յուրաքանչյուր հարց ունենալու է չորս տարբերակ պատասխան, որից ճիշտ է լինելու միայն մեկը:

Խորացված և պրակտիկ հմտությունների զարգացման փուլի Գնահատման գործիքը իրենից ներկայացնում է յուրաքանչյուր խորացված ուսուցման, առցանց հանդիպման (վարպետաց դասի) և ուսումնական այցի շրջանակներում քննարկվելիք թեմայի (թեմաների) շուրջ 10 հարցից բաղկացած նախնական (pre) և վերջնական (post) հարցաշար-քուիզ, որը թույլ կտա հետևել մասնակցի գիտելիքի փոփոխությանը և ստուգել գիտելիքների աճը (զարգացումը): Այս փուլի շրջանակներում գնահատվելու են առաջին և երկրորդ մոդուլներով ձեռք բերված գիտելիքներն ու կարողությունները:

4.3. Քաղաքացիների կարողությունների փոփոխությունը գնահատելու և հետևելու գործիքը (Գնահատման գործիքը)

Քաղաքացիների կարողությունների փոփոխության գնահատումը իրականացվելու է հետևյալ երկու մոդուլներով.



Գնահատման գործիքով ստուգվելու է վերապատրաստման **առցանց ուսուցման փուլում** ձեռք բերված գիտելիքներն ու կարողությունները։

Առցանց ուսուցման փուլի Գնահատման գործիքը իրենից ներկայացնում է թեմայի շուրջ 10 հարցից բաղկացած հարցաշար-քուիզից, որտեղ մասնակիցը պետք է պատասխանի յուրաքանչյուր թեմայի վերաբերյալ հարցերի ութսուն տոկոսին կամ ավելիին, որից հետո ուսուցման հարթակը թույլ կտա ավտոմատ կերպով անցնել հաջորդ թեմային։ Հարցաշարերը լինելու են վերը նշված երկու մոդուլների վերաբերյալ։ Յուրաքանչյուր հարց ունենալու է պատասխանների չորս տարբերակ՝ մեկ ճիշտ պատասխանի հնարավորությամբ։